ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ «ՎԱՉԵ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՒ ԴՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Տեր Արարատ Քահանա Պողոսյան

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
«Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանի տնօրեն

ԻԱ դարում, տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացման արդյունքում, փոփոխության ենթարկվեցին ինչպէս գրքի, այնպես էլ գրադարանների մասին մեր ունեցած ավանդական պատկերացումները: Ժամանակներին համընթաց մի հասարակարգից դեպի մյուսին անցումն իր հետքն է թողել գրքի և գրադարանների պատմության մեջ: Կավե սալիկներից անցում է կատարավել դեպի պապիրուս, պապիրուսից՝ մագաղաթի, մագաղաթից թղթի, տպագիր գրքից՝ էլեկտրոնայինի: Ներկայումս «էլեկտրոնային գիրք», «թվային գրադարան» հասկացությունները լայնորեն իրենց կիրառումն են գտել մեր կենցաղի մեջ, ավելին, առանց թվային գրադարանների գոյության արդեն իսկ դժվարությամբ ենք պատկերացնում կրթական պրոցեսների կազմակերպումը, գիտական աշխատանքների պատրաստումը և տարատեսակ տեղեկատվության որոնումն ու օգտագործումը:

Առհասարակ թվային գրադարանը, որպես այդպիսին, կոչված է արագ և արդյունավետ կերպով տեղեկատվություն տրամադրել օգտվողներին աշխարհի ցանկացած վայրում ցանկացած ժամանակ: Իհարկե սա շատ մեծ առավելություն է ավանդական գրադարանների հանդեպ, որովհետև վերջիններից օգտվելու պարագայում գոյություն ունեն տարածության և ժամանակի սահմանափակման խնդիրներ: Բացի այդ, այն հնարավորություն է տալիս տեղեկատվության ֆիզիկական կրիչներին անկախ իրենց տեսակից՝ ձեռագիր կամ տպագիր, զերծ պահել վնասումից:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, իր ձևավորման փուլից սկսած եղել և մնում է որպես հայ ժողովրդի հոգևոր-մշակութային գանձարանը հարստացնող եզակի համազգային կառույցներից մեկը:

Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի հոգևոր կենտրոն Միածնաէջ այս սուրբ վայրում Մատենադարանի գոյության անհրաժեշտությունը գիտակցվել է դեռևս Ե դարում: Եվ պատահական չէ, որ Հայոց Կաթողիկոսության նստավայրին կից է ստեղծվել առաջին գրապահոցը, որտեղ հազարավոր ձեռագիր մատյաններ են գրվել ու ընդօրինակվել:

Ե դարի սկզբին, երբ սուրբ Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայոց գրերը, բացվեց հայ ժողովրդի նոր արշալույսը, դառնալով նոր դարաշրջան հայ ժողովրդի կյանքի, պատմության, մշակույթի, հոգևոր աշխարհում: Հայոց սրբատառ այբուբենը մեր ժողովրդի կյանքում վերածվեց աղոթքի, որի միջոցով Աստվածաշնչից թարգմանվեց առաջին հայերեն նախադասությունը. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ իմանալ զբանս հանճարոյ»: Ապա Ս. Մեսրոպ Մաշտոցն ու նրա աշակերտները թարգմանեցին այլ գրքեր: Գրվեցին հայալեզու առաջին ձեռագրերը: Աստվածապարգև գրերից չանցած մեկ հարյուրամյակ, հայ ժողովուրդը կերտեց Հայոց մշակույթի բացառիկ ու անկրկնելի դարը, որը հետո պիտի անվանվեր Ոսկեդար:

Վաղարշապատում առաջին թարգմանությունների և պատմիչներ՝ Կորյունի, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու ձեռագրերի հիմքի վրա ստեղծվում է առաջին գրապահոց-մատենադարանը: Այս մասին վկայում է Ե դարի պատմիչ Ղազար Փարպեցին: Հայոց Կաթողիկոս Սահակ Պարթևի և Հայոց արքա Վռամշապուհի հովանավորությամբ ու անմիջական աջակցությամբ գրչության այս հնագույն կենտրոնից են իրենց լուսավորչական գործունեությունը սկսում Սուրբ Մեսրոպ Մաշտոցն ու նրա աշակերտները: Մաշտոցի և Սահակ Պարթևի հիմնած Մատենադարանը հարյուրամյակներ

շարունակ գործում է Հայ Առաքելական Եկեղեցու Կաթողիկոսարանում՝ որպես Մայր Գրատուն։ Այստեղ ոչ միայն հավաքվում ու պահպանվում էին եւ են հայերեն ձեռագիրը և տպագիր գիրքը, այլև ուսումնասիրվում, ընդօրինակվում, հրատարակվում և տարածվում էին և են աշխարհով մեկ։

Հենց այս տեսիլքով է, որ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին իսկ տարիներից սկսած Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նոր զարկ տրվեց գրադարանային գործի կազմակերպման գործընթացին։ Գարեգին Բ Շինարար Հայրապետի բարձր տնօրինությամբ և Վաչե ու Թամար Մանուկյանների ազնիվ նվիրատվությամբ կարճ ժամանակահատվածում Մայր Աթոռում վեր խոյացավ գիրքը ստեղծող, պաշտող ժողովրդին հարիր Սուրբ Էջմիածնի Մատենադարանի շենքը։ Այն հանդիսանում է Հայ Եկեղեցու բազմադարյա գրավոր հարուստ ժառանգության և այդ ժառանգության հանդեպ Հայ Եկեղեցու անսահման ակնածանքի խտացյալ նյութական խորհրդանիշը։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանը պաշտոնապես բացվել է 2012 թ. հոկտեմբերի 18-ին։ Մատենադարանի բազմահարուստ ֆոնդի հիմքն է հանդիսանում դեռևս Վազգեն Ա երջանկահիշատակ Կաթողիկոսի գահակալության շրջանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կազմավորված գրադարանը, Գարեգին Ա երանաշնորհ հայրապետի անձնական գրադարանային ֆոնդը, Հայաստանի Աստվածաշնչային ընկերության կողմից նվիրաբերված բացառիկ կրոնագիտական գրականությունը։ Տարիներ շարունակ համարվելով միայն գահակալ Հայրապետների անձնական գրադարան և չունենալով համապատասխան շենքային պայմաններ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում առկա գրադարանն ըստ էության փակ է եղել հասարակության լայն զանգվածների համար։ Նորակառույց շենք տեղափոխվելուց հետո, Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ այլեւս Մատենադարանի դռները բաց են բոլորի համար։

Մատերանդարանի ֆոնդերի համալրումն իրականացվում է շնորհիվ այն նվիրատվությունների, որոնք աշխարհի տարբեր վայրերից կատարվում են կաթողիկոսարանին, միաբանությանը, ինչպես նաև անմիջապես Մատենադարանին: Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ Մատենադարանն ունի առանձին ֆինանասական բյուջե, որից տարեկան մի քանի միլիոն դրամ է հատկացվում միայն գրականություն ձեռք բերելու համար, ինչի շնորհիվ էլ կարողանում ենք ձեռք բերել մեզ անհրաժեշտ գրականությունն ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից:

Մինչ այժմ Մատենադարանում հիմնական աշխատանքներն ուղղված են եղել առկա և հընթացս համալրվող գրականության հաշվառման, քարտագրման, դասակարգման և դրանք ընթերցողներին սպասարկելու ուղղությանը: Վերջին տարիներին փոքրիկ փորձ է կատարվել ավտոմատացնելու գրքային ֆոնդը և ընթերցողների սպասարկման գործընթացը, որի արդյունքում կազմված էլեկտրոնային քարտարանը թույլ է տալիս արագ կատարել անհրաժեշտ տեղեկատվության որոնում և սպասարկում, բայց այն կիրառելի է միայն տեղային օգտագործման համար և համատեղելի չէ Ստանդարտացման միջազգային կազմակերպության ընդունած համաձայնագրերի հետ: Իսկ առանց դրա տարբեր գրադարաններում արդեն իսկ ստեղծված էլեկտրոնային փաստաթղթերի համատեղելիությունն ապահովել հնարավոր չէ: Ծրագրատեխնիկական ապահովման շուկայում ընթացող անընդհատ փոփոխությունների և կատարելագործումների, ինչպես նաև թվային գրադարանների կառուցման և շահագործման համար նախատեսված ստանդարտների փոփոխության պարագայում միայն այդ կերպ է հնարավոր ապահովել էլեկտրոնային շտեմարանների անխափան փոխհամագործակցությունը: Այս խնդիրը կարգավորելու համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մատենադարանը Հայաստանի Ազգային գրադարանի և Երևանի պետական համալսարանի Ինֆորմատիկայի և

կիրառական մաթեմատիկայի ամբիոնի հետ համատեղ աշխատանքներ է ձեռնարկել առկա քարտարանի Մեքենաընթեռնելի քարտագրումն ընդհանուր ստանդարտներով վերաձևակերպելու համար:

Այս տարի Ս. Էջմիածնի Մատենադարանը Հայաստանի ազգային գրադարանի հետ համատեղ նախագիծ է մշակել, որն իմիջայլոց արդեն իսկ ընթացքի մեջ է, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական ամսագրեր հանդիսացող «Արարատ» և «Էջմիածին» պարբերականները թվայնացնելու և «Հայ մամուլի» համահավաք գրացուցակի մեջ ազատ օգտագործման սկզբունքով ներկայացնելու համար:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մատենադարանն իր հնատիպ գրականության բաց ֆոնդում ունի շուրջ 400 միավոր գրականություն: Մատենադարանի՝ Հայ հնատիպ գրականության միասնական քարտարանի ձևավորման գործընթացին միանալու ժամանակ, այդ գրականության մեծ մասն արդեն արտացոլված էր միասնական քարտարանի մեջ: Եվ քանի որ այդ ամենը գրանցվել, կազմվել էր Մեքենաընթեռնելի քարտագրման ընդհանուր ստանդարտների հիման վրա, ուստի անհրաժեշտություն չառաջացավ եղած գրականության կրկնակի թվայնացման համար: Պարզապես Հայաստանի Ազգային գրադարանի և ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի հետ համագործակցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մատենադարանը ևս ընդգրկվեց այդ գործընթացի մեջ՝ տրամադրելով միայն այն գրականության թվայնացված ձևաչափերը, որոնց եզակի օրինակները պահպանված էին մեզ մոտ և բացակայում էին համընդհանուր քարտարանից:

Ներկայումս, Ս. Էջմիածնի Մատենադարանի ֆոնդերի թվայնացման հիմնական աշխատանքներն ուղղված են լրիվ տեքստային շտեմարանի ձևավորման համար նախատեսվող աշխատանքներին: Էջ առ էջ սկանավորման միջոցով թվայնացվում է առկա գրականությունը՝ առաջին անհրաժեշտության և բացառիկության սկզբունքով՝ անշուշտ նախապատվություն տալով կրոնական, ապա և հայագիտական գրականությանը: Կատարված աշխատանքները

պահպանվում են մեր տվյալների բազայում, ինչպես անմշակ այնպես էլ մշակված տարբերակներով՝ հետագայում համապատասխան ծրագրատեխնիկական ապահովում ունենալու պարագայում շտեմարանի արագ ձևավորման համար:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մատենադարանի թվայնացման շրջանակներում նախատեսվում է ձևավորել էլեկտրոնային քարտարան՝ հիմնված ստանդարտացման միջազգային կազմակերպության ընդունած համաձայնագրերի վրա, որպեսզի հնարավոր լինի միանալ տարբեր գրադարանների միջև տեղեկատվական պաշարների փոխանակման գործընթացին: Միաժամանակ աշխատանքներ կշարունակվեն լրիվ տեքստային շտեմարանների կազմման և ձևավորման համար: Նորագույն տեխնիկական սարքերի ձեռքբերման արդյունքում կարագանա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մատենադարանի գրքերի թվայնացման և ընթերցողների էլեկտրոնային սպասարկման գործընթացը:

Վերոնշյալ բոլոր իրողությունները մեզ ուղղորդել են մտածել ևս մի կարևոր երևույթի մասին: Մասնավորապես հայտնի է, որ այսօր՝ ԻԱ դարում, համացանցը մարդու կյանքում դարձել է տեսանելի եւ շոշափելի իրականություն: Համացանցի միջոցով մարդիկ լուծում են բազմաթիվ խնդիրներ: Մեր օրերում յուրաքանչյուր հասարակական կառույց իր գործունեությունը իրականացնում է նաեւ համացանցում, վերջինս նաեւ միջոց է որեւէ կառույցի գործունեության մասին տեղեկատվություն ստանալու եւ դրա ընթացքին հետեւելու համար: Այս լույսի ներքո անհրաժեշտություն է դառնում Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» Մատենադարանի համար սեփական առանձին կայք ունենալը: Այս գիտակցումով Ս. Էջմիածնի Մատենադարանն արդեն Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուշադրությանն է հանձնել կայք ունենալու անհրաժեշտության մասին իր մտածումները և ստացել Վեհափառ Հայրապետի համաձայնությունը, իսկ ներկա պահին կայքի ստեղծման ուղղությամբ հատուկ կազմակերպությունների հետ տարվում են բանակցություններ: Առաջ անցնելով նշենք, որ նախատեսվող կայքից է մեծապես

կախված Ս. Էջմիածնի Մատենադարանի թվայնացման գործընթացը և նրա զարգացումը: Կայքում պետք է ներկայացվեն ոչ միայն Մատենադարանի գործունեությունը, դրա ընթացքը, այլեւ այս կայքի միջոցով մեր ընթերցողները կկարողանան մինչեւ Մատենադարան այցելելը ստուգել, թե արդյոք իրենց փնտրած գիրքը առկա է թե ոչ Ս. Էջմիածնի Մատենադարանում, միաժամանակ ընթերցողը հնարավորություն կունենա առցանց պատվեր կատարելու՝ էլ ավելի արդյունավետ դարձնելով Մատենադարանի սպասարկման գործընթացը: Արդեն վերևում նշեցինք, որ աշխատանքներ են տարվում քարտարանի համապատասխան կոդավորումով թվայնացման ուղղությամբ, որն արդեն լուծվել է եւ տվել իր դրական արդյունքը:

Բացի նշվածներից, Ս. Էջմիածնի Մատենադարանը ներքին բանավոր պայմանավորվածություն ունի Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի հետ, ըստ որի Մայր Աթոռի Հրատարակչության կողմից տպագրված գրքերը համապատասխան ձևաչափերով և համակարգված կտեղադրվեն նախատեսվող կայքում՝ ազատ ներբեռնման սկզբունքով:

Վերջերս Մայր Աթոռը Ավագ Հարությունյան աշխատասիրությամբ լույս ընծայեց Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանը վերաբերող գրականության արժեքավոր մատենագիտությունը: Այս առիթով Ս. Էջմիածնի Մատենադարանը նախատեսում է եկող տարի Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցին ընդառաջ լծվել մի կարևոր գործընթացի: Նախատեսվում է արդեն առկա մատենագիտության մեջ նկարագրված շուրջ 17 000 միավոր գրականությունը թվայնացնել եւ տեսանելի դարձնել ողջ հանրությանը: Այս փուլում առաջնահերթության սկզբունքից ելնելով խնդիր ենք դրել թվայնացնել Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանը վերաբերող օտարալեզու գրականությունը, ապա՝ նաև հայալեզու: Ի հարկե մենք գիտակցում ենք, որ այս պարագային շատ հաճախ բախվելու ենք հեղինակային իրավունքի խնդրի հետ: Սակայն այս չափազանց կարևոր և մեր ժողովրդի համար

կենսական այս խնդրի լուծման առաջ Ս. Էջմիածնի Մատենադարանը գործադրելու է ամեն ջանք ու եռանդ, որպեսզի հասնի ցանկալի արդյունքի՝ հարկ եղած դեպքում առանձին բանակցություններ վարելով անհրաժեշտ գրքի հեղինակային իրավունքի տեր և կամ կազմակերպության հետ:

Պետք է նշել, որ Ս. Էջմիածնի Մատենադարանը իրականացնելու է ոչ միայն գրադարանային ու գիտական գործունեություն, այլև արդեն ավարտական փուլում են գտնվում Մատենադարանից ներս թանգարան ունենալու աշխատանքները: Շեշտենք, որ Ս. Էջմիածնի Մատենադարանի թանգարանային գործունեությունը չի լինելու սիրողական, այլ բարձր գրադարանային չափանիշներին համապատասխան: Նախատեսվում է երեք սրահ հատկացնել թանգարանին: Թանգարանն ընդհանուր անվամբ կոչվելու է գրքի թանգարան՝ իր մեջ ներառելով երեք բաժիններ: Առաջին մեծ բաժինը, որը կոչվելու է «Գիրքը Ս. Էջմիածնում» նախատեսվում է ցուցադրել 1771-2014 թթ ընթացքում տպագրված արժեքավոր գրքերը, երկրորդ բաժինը նվիրված է հնատիպ գրքի ցուցադրությանը, իսկ երրորդ բաժինը կկոչվի «Թեմատիկ փոփոխությունների սրահ», որտեղ կցուցադրվեն որևէ համազգային նշանակության երևույթի, որևէ նշանավոր ազգային-եկեղեցական գործչի վերաբերյալ գրքեր, որոնք որոշակի պարբերականությամբ կփոփոխվեն:

Ահա սրանք են թվայնացման ուղղությամբ այն կարճաժամկետ նախագծերն ու ծրագրերը, որ այսօր Ս. Էջմիածնի Մատենադարանը դրել է իր առջև: Անշուշտ մենք ունենք նաև հեռահար ծրագրեր, որոնց մասին որպես նորաբաց Մատենադարան դեռևս վաղ է խոսել: Վերջիններս մեծապես կապված են Ս. Էջմիածնի Մատենադարանի աշխատակազմի համալրման և տեխնիկական հագեցվածության խնդիրների հետ, որոնք կարծում ենք ոչ շատ հեռու ապագայում եւս կլուծվեն՝ խթանելու Ս. Էջմիածնի Մատենադարանի՝ գրադարանային և թանգարանային ոլորտում տարվող աշխատանքները: